ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ մասը, ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշումը, ՀՀ առողջապահության նախարարի 2022 թվականի նոյեմբերի 8-ի 75-Ն հրամանի 3-րդ հավելվածի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը, 7 կողմ, 0 դեմ ձայների հարաբերակցությամբ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ՈՐՈՇԵՑ

1.«Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բուժաշխատող -ի դիմումը բավարարել մասնակի ՝

1) մերժել դիմումը՝ «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժաշխատող Քրիստինե Սարգսյանի արարքում բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնի խախտման փաստի բացակայության հիմքով՝ ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջի մասով.

2) հաստատված համարել «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ավագ բուժաշխատող Քրիստինե Սարգսյանի կողմից ՀՀ կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի թիվ 182-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված բուժաշխատողի մասնագիտական էթիկայի կանոնի խախտման փաստը և առաջարկել ՀՀ առողջապահության նախարարին ավագ բուժաշխատող Քրիստինե Սարգսյանին ՀՀ աշխատանքային օրենսդրության համաձայն նկատողություն տալու առաջարկությամբ դիմել նրա գործատուին՝ «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի իրավասու անձին: